<<ՀԱԷԿ>> ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ,ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ, ՄԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ և ՍԱՆԻՏԱՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-12/21-03/49

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳԸԲ) 03/49 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
<<02>> 08 2021թ.

ք. Մեծամոր

<<ՀԱԷԿ>> ՓԲԸ Գլխավոր տնօրենն, ի դեմս Էդուարդ Մարտիրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից,

և **ՀՀ ԱՆ «Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ-Ն**, ի դեմս Ընկերության տնօրեն **Ա.Վանյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **<<ՀԱԷԿ>> ՓԲԸ կարիքների համար խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն, մանրէաբանական, մակաբուծական և սանիտարաքիմիական ցուցանիշների հետազոտություն ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.3 և 5.2 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության **3** օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից **3** օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **282 800 (երկու հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 3.2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ «ՀԱԷԿ» ՓԲԸ	ԿԱՏԱՐՈՂ ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Ազգային Կենտրոն>> ՊՈԱԿ
Հասցե: ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 0910 **ՀՎՀՀ:** 04401874 **Հ/Հ:** 1930000199200100 **Բանկ:** «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան, **Հեռ.** (+374 10) 28-18-80, 20-04-91, 28 29 60 **E-mail:** anpp@anpp.am	**Հասցե:** ՀՀ, ք. Երևան, Մ. Հերացի 12 **ՀՎՀՀ:** 02625503 **Հ/Հ:** 900018004649 **Բանկ:** Երևանի թիվ 1 ՏԳԲ **Հեռ.:** +374 231 5 23 86 **E-mail:** armavir@ncdc.am
..... **Է. Մարտիրոսյան** /ստորագրություն/ Կ.Տ.	..... **Ա. Վանյան** /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված 1
02 08 2021 թ. կնքված
ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-12/21 -03/49 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
չ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավորի գին /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը
1	Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն:	Հսկողությունն իրականացվում է եռամսյակը մեկ անգամ համաձայն «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ», ՀՀ առողջապահության նախարարության №2-III-Ա2-1 հրամանի և կից հաստատված ծավալաթերթի առ 31.05.2021թ.:	լրակազմ	70700	282800	4	Արմավիրի մարզ, ք.Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ	Ծառայությունը անհրաժեշտ է մատուցել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 365 օր՝եռամսյակը մեկ
1.1	Խմելու ջրի մանրէաբանական և մակաբուծաբանական ցուցանիշների հետազոտություններ:		Լրակազմ /անալիզ/	6400	25600	4		
1.2	Խմելու ջրի սանիտարաքիմիական հետազոտություններ:		Լրակազմ /անալիզ/	64300	257200	4		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

/ստորագրություն/ **Է.Մարտիրոսյան**

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Ազգային Կենտրոն>> ՊՈԱԿ

/ստորագրություն/ **Ա.Վանյան**

Կ.Տ.

«Հաստատում եմ»
ՀԱԷԿ-ի գլխավոր ճարտարագետ
Ա.Ռ.Գրիգորյան
«31» 05 2021թ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն, մանրէաբանական, մակաբուծաբանական և սանիտարաքիմիական ցուցանիշների հետազոտություն

հ/հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Ծանոթություն
1.	**Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն**			
1.1	**Խմելու ջրի մանրէաբանական և մակաբուծաբանական ցուցանիշների հետազոտություն**			ընդամենը 3 հետազոտություն
1.1.1	Ջերմատոլերանտ կոլիֆորմ մանրէներ (կոլիտեր. կոլինդեքս)	անալիզ	1	
1.1.2	Ընհանուր կոլիֆորմ մանրէներ	անալիզ	1	
1.1.3	Մանրէների ընդհանուր քանակություն	հետազոտություն	1	
1.2	**Խմելու ջրի սանիտարաքիմիական հետազոտություն**			ընդամենը 17 նմուշ և հետազոտություն
1.2.1	Մնացորդային քլոր (CL)	նմուշ	1	
1.2.2	Պերմանգանատային օքսիդացում	նմուշ	1	
1.2.3	Ամոնյակ (ըստ NH_4)	նմուշ	1	
1.2.4	Նիտրատներ (ըստ NO_2)	նմուշ	1	
1.2.5	Նիտրիդներ (ըստ NO_3)	նմուշ	1	
1.2.6	Ընդհանուր հանքայնացում (չոր մնացորդ)	նմուշ	1	
1.2.7	Երկաթ (Fe գումարային)	նմուշ	1	
1.2.8	Պղինձ (Cu^{+2} գումարային)	նմուշ	1	
1.2.9	Ցինկ (Zn^{+2} գումարային)	նմուշ	1	
1.2.10	pH	նմուշ	1	
1.2.11	Ընդհանուր կոշտություն	նմուշ	1	
1.2.12	Ֆտոր	նմուշ	1	
1.2.13	Սուլֆատներ	նմուշ	1	
1.2.14	Քլորիդներ	նմուշ	1	
1.2.15	Հիմնայնություն	նմուշ	1	
1.2.16	Կալցիում	նմուշ	1	
1.2.17	Մագնեզիում	նմուշ	1	

Խմելու ջրի մանրէաբանական, մակաբուծաբանական և սանիտարաքիմիական ցուցանիշների հետազոտությունները նշված ծավալով և արդյունքների տրամադրումը պատվիրատուին պետք է կատարել եռամսյակը մեկ անգամ

Գլխավոր ճարտարագետի տեղակալ շահագործման գծով՝ Ա.Մ. Օրդուբեկյան

/ ՇՊՏԲ – ի պետ՝ Ս.Ա. Ղազարյան

ՋՍՀԱ – ի պետ՝ Վ.Պ. Մկրտչյան

Կատ. ՇՊՏԲ
Հտ. 32-39

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

.....
/ստորագրություն/
Է.Մարտիրոսյան

Կ.Տ.

ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Ազգային Կենտրոն>> ՊՈԱԿ

.....
/ստորագրություն/
Ա. Վանյան

Կ.Տ.

Հավելված 2
02 08 2021թ. կնքված
ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-12/21 -03/49 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ըստ ամիսների, այդ թվում												
			2021						2022						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	Ընդամենը
1	73111200	Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն:	70700	70700	70700	141400	141400	141400	212100	212100	212100	282800	282800	282800	282800	282800

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*
****Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայության գնորդի կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա (ներառյալ վաղաժամկետ մատուցման դեպքերը)*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

/ստորագրություն/ **Է.Մարտիրոսյան**

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Ազգային Կենտրոն>> ՊՈԱԿ

/ստորագրություն/ **Ա.Ավանյան**

Կ.Տ.

Հավելված 3
02 08 2021 թ. կնքված
ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-12/21 -03/49 ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԸ ԵՎ ԳԻՆԸ

հ/հ		Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Ծանոթություն	Ընդամենը
1.		**Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն**				
1.1		**Խմելու ջրի մանրէաբանական և մակաբուծաբանական ցուցանիշների հետազոտություն**				
1.1.1	6	Խմելու ջրի նմուշում մանրէների ընդհանուր թվի որոշում	1 հետազոտություն	4	1100	4400
1.1.2	7	Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ	անալիզ	4	2300	9200
1.1.3	8	Ջերմատոլերանտ կոլիֆորմ մանրէներ/կոլիտեր, կոլինդեքս/	անալիզ	4	1200	4800
1.2		**Խմելու ջրի սանիտարաքիմիական հետազոտություն**				
1.2.1	54	Ջրում ջրածնային ցուցիչի (PH) սանիտարաքիմիական հետազոտություն՝ պոտենցիմետրիկ մեթոդ, ֆիքսանալի կիրառմամբ	1 նմուշ / 1 հետազոտություն	4	2600	10400
1.2.2	55	Ջրում մնացորդային ազատ քլորի սանիտարաքիմիական հետազոտություն 1	1 նմուշ / 1 հետազոտություն	4	1400	5600
1.2.3	58	Ջրում պերմանգանատային օքսիդացման սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	800	3200
1.2.4	64	Ջրում ցինկի սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	6800	27200
1.2.5	68	Ջրում երկաթի սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	8400	33600
1.2.6	69	Ջրում պղինձի սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	6800	27200
1.2.7	74	Ջրում մանգանի սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	6800	27200
1.2.8	80	Ջրում ամոնիում իոնի սանիտարաքիմիական հետազոտություն ֆոտոմետրիկ մեթոդով	1 նմուշ / 1 հետազոտություն	4	1600	6400
1.2.9	82	Ջրում նիտրատների սանիտարաքիմիական հետազոտություն ֆոտոկոլորիմետրիկ մեթոդով	1 նմուշ / 1 հետազոտություն	4	3200	12800
1.2.10	83	Ջրում նիտրիտների սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	3700	14800
1.2.11	84	Ջրում քլորիդների սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	6500	26000
1.2.12	85	Ջրում սուլֆատների սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	3200	12800

1.2.13	87	Ջրում հանքայնացման /չոր մնացորդի սանիտարաքիմիական հետազոտություն՝ գրավիմետրիկ մեթոդ, չորացնող պահարանի կիրառմամբ	1 նմուշ / 1 հետազոտություն	4	4500	18000
1.2.14	88	Ջրում կոշտության որոշում՝ սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	1700	6800
1.2.15	90	Ջրում ֆտորիդների սանիտարաքիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	6300	25200
1.2.16	202	Լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքների հիման վրա եզրակացության տրամադրում	1 եզրակացություն	4	1800	7200
		ԸՆԴԱՄԵՆԸ				**282800 /ՀՀ դրամ/**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

.....**Է.Մարտիրոսյան**
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Ազգային Կենտրոն>> ՊՈԱԿ

.....**Ա.Վանյան**
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 3.1
____ _____2021թ. կնքված
ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-12/21 -03/49 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.2
____ _____2021թ. կնքված
ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-12/21 -03/49 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 3 օրինակից, երկու օրինակ տրամադրվում է պատվիրատուին և 1 օրինակ կատրողին:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն